Կարգապահական գործ թիվ ԿԳ-23038

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԽԱՆՈՒՄ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Կարինե Բաղդասարյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Վահե Աստվածատրյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի, Հայկ Սահակյանի և Արաքս Վարդանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ Արթուր Սարգսյանի,

քննության առնելով փաստաբան Խանում Սերյոժայի Մկրտչյանին **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 278), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Արթուր Սարգսյանը (**այսուհետ՝ նաև Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է, որ 28.03.2023թ. փաստաբան Խանում Մկրտչյանի հետ կնքել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, ըստ որի վերջինս պարտավորվել է կազմել հայցադիմում ՀՀ Պարեկային ծառայության կողմից կազմված թիվ 8180299451 որոշումը անվավեր ճանաչելու վերաբերյալ և մասնակցել դատական քննությանը՝ ՀՀ Վարչական դատարանում: Ծառայությունների դիմաց Դիմողը վճարել է Փաստաբանին 170.000 ՀՀ դրամ:

Դիմողը նշել է, որ նշված գործի շրջանակներում հետևողական է եղել, որ

հայցադիմումը ժամանակին ներկայացվի դատարան: Իր հերթին, Փաստաբանը ամեն անգամ խոստումներ է տվել գործի դրական ելքի վերաբերյալ, սակայն վերջինիս անգործության արդյունքում հայցադիմումը ներկայացրել է դատարան ժամկետների խախտմամբ: Բաց թողնված դատավարական ժամկետի վերականգման համար որպես հիմնավորում Փաստաբանը ներկայացրել է դատարանին իր սրտի էխոսրտագրության ժապավենը և դեղատոմսը, սակայն դատարանն այն չի գնահատել որպես հարգելի պատճառ: Ներկայացված հայցադիմումը դատարանը վարույթ չի ընդունել:

Դիմողը նշում է, որ Փաստաբանը պարտավորվել է վերաքննիչ բողոք ներկայացնել դատարան, սակայն վերադաս ատյան բողոք ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետները փաստաբանը ևս բաց է թողել:

Վերոգրյալի հաշվառմամբ, Դիմողը պնդում է, որ Փաստաբանի անգործության և խաբեության պատճառով զրկվել է դատական կարգով իր իրավունքների պաշտպանությունից, ուստի՝ խնդրել է Փաստաբանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչ կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Խանում Մկրտչյանին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 39.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, ներկայացնել բացատրություն Արթուր Սարգսյանի դիմումի վերաբերյալ, սակայն <u>Փաստաբանի կողմից պատասխան</u> չի ներկայացվել:

Կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 22.11.2023 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Փաստաբանի կողմից որևէ ապացույց չի ներկայացվել:

Հանձնաժողովի 2024 թվականի հունվարի 31-ին հրավիրված կարգապահական հանձնաժողովի նիստին փաստաբանը չի ներկայացել:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 26.10.2023թ. թիվ 268-Ա/ԿԳ-23038 որոշմամբ փաստաբան Խանում Սերյոժայի Մկրտչյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է

կարգապահական վարույթ:

01.11.2023թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Հայկ Ծատուրյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 29.12.2023թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված է համարվել Պատասխանողի կողմից Դիմող Արթուր Սարգսյանի իրավունքների ու շահերի պաշտպանությունը ստանձնելու փաստը, փաստաբան Խանում Մկրտչյանի կողմից պարեկային ծառայության կողմից կազմված թիվ 8180299451 վարչական իրավախախտման մասին որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ վիճարկման հայցը սահմանված երկամսյա ժամկետի բաց թողնմամբ դատարան ներկայացնելու փաստը, հայցադիմումի ընդունումը, ինչպես նաև ներկայացված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը դատարանի կողմից մերժվելու փաստը, ինչպես նաև վերաքննիչ վարչական դատարանի կողմից թիվ ՎԴ5/0324/05/23 վարչական գործով «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» ՀՀ վարչական դատարանի 30.08.2023 թվականի որոշման դեմ Արթուր Սարգսյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը մերժելու փաստը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 29.12.2023թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 31.01.2024թ. ժամը 19:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

- Փաստաբան Խանում Մկրտչյանը ստանձնել է Դիմող Արթուր Սարգսյանի իրավունքների ու շահերի պաշտպանությունը: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի 28.03.2023թ. կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրով **(այսուհետ՝ Պայմանագիր),** ինչպես նաև կողմերի նամակագրությամբ:*

- Փաստաբանը պարտավոր էր կազմել հայցադիմում ՀՀ պարեկային ծառայության կողմից կազմված թիվ 8180299451 վարչական իրավախախտման մասին որոշումը անվավեր ճանաչելու վերաբերյալ և մասնակցել դատական քննության ՀՀ վարչական դատարանում: *Նշված փաստը հաստատվում է Պայմանագրի 2.1 կետով:*
- Թիվ 8180299451 վարչական իրավախախտման մասին որոշումը բողոքարկվել է վարչական կարգով և փոստային առաքմամբ բողոքի վերաբերյալ 03.05.2023 թվականի որոշումը Դիմողը ստացել է 11.05.2023թ., իսկ Դիմողի կողմից վիճարկման հայցը դատարան է ներկայացվել 23.08.2023թ. սահմանված երկամսյա ժամկետի բաց թողնմամբ: *Նշված փաստը հաստատվում է թիվ ՎԴ5/0324/05/23 վարչական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*
- Հայցադիմումի ընդունումը, ինչպես նաև ներկայացված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը դատարանը մերժել է: *Նշված փաստը հաստատվում է թիվ ՎԴ5/0324/05/23 վարչական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*
- ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը թիվ ՎԴ5/0324/05/23 վարչական գործով «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Տիգրան Սանթրոսյան) 30.08.2023 թվականի որոշման դեմ Արթուր Սարգսյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը, մերժել է: *Նշված փաստը հաստատվում է թիվ ՎԴ5/0324/05/23 վարչական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Խանում Մկրտչյանը փաստաբան է հանդիսանում 30.08.1996թ-ից և 2018-2024թթ. ընկած ժամանակահատվածում փաստաբանը ունի 3 կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Խանում Մկրտչյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա է*

կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար (….):

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝ *փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում, կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Ներկայացված նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար

անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Նշվածի հաշվառմամբ, փաստաբանի վարքագծի կանոններով փաստաբանի համար սահմանվում են որոշակի պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից, **բարեխղճորեն և ժամանակին** պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը:

Ավելին, տրված հանձնարարության շրջանակներում փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ կարող են լինել վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Տվյալ դեպքում, սույն կարգապահական վարույթի շրջանակներում Դիմողի և Փաստաբան Խանում Մկրտչյանի 28.03.2023թ. կնքված Պայմանագրով, ինչպես նաև կողմերի նամակագրությամբ հաստատվում է փաստաբան Խանում Մկրտչյանի կողմից Դիմող Արթուր Սարգսյանի իրավունքների ու շահերի պաշտպանությունը ստանձնելու փաստը:

Փաստաբանը պարտավոր էր կազմել հայցադիմում ՀՀ պարեկային ծառայության կողմից կազմված թիվ 8180299451 վարչական իրավախախտման մասին որոշումը անվավեր ճանաչելու վերաբերյալ և մասնակցել դատական քննության ՀՀ վարչական դատարանում: *Նշված փաստը հաստատվում է Պայմանագրի 2.1 կետով:*

Թիվ ՎԴ5/0324/05/23 վարչական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով հաստատվում է՝ Դիմողի կողմից վիճարկման հայցը սահմանված երկամսյա ժամկետի բաց թողնմամբ ՀՀ վարչական դատարան ներկայացնելու փաստը, ինչպես նաև հայցադիմումի ընդունումը և ներկայացված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը դատարանի կողմից մերժելու փաստը:

Թիվ ՎԴ5/0324/05/23 վարչական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով հաստատվում է ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից թիվ ՎԴ5/0324/05/23 վարչական գործով «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» ՀՀ վարչական դատարանի 30.08.2023 թվականի որոշման դեմ Դիմողի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը մերժելու փաստը:

Այսպես՝ թիվ ՎԴ5/0324/05/23 վարչական գործով դատարանի կողմից 30.08.2023թ. կայացրած «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժելու» մասին որոշման համաձայն հայցվորը վիճարկվող ՀՀ Պարեկային ծառայության որոշումը ստացել է 11.05.2023թ.:

Վիճարկման հայցը և բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը Փաստաբանը ներկայացրել է դատարան 23.08.2023թ.: Դատարանը արձանագրել է, որ հայցվորի կողմից բաց է թողնվել վիճարկման հայց ներկայացնելու երկամսյա ժամկետը, իսկ անդրադառնալով Փաստաբանի ներկայացրած միջնորդությանը՝ գտել է, որ ներկայացված ապացույցները բավարար չեն բաց թողնված ժամկետը հարգելի համարելու փաստի հաստատման համար: Փաստաբանի վերը նշված գործողությունները վկայում են, որ քննարկվող գործի շրջանակներում Փաստաբանը կամ չի տիրապետել ՀՀ վարչական դատավարության նորմերին կամ տիրապետել է, սակայն չի գործել համապատասխան այդ նորմերի, ինչը վստահորդին վնաս է հասցրել՝ թույլ չտալով վերջինիս իրացնել դատական պաշտպանության իրավունքը:

Այդուհանդերձ, հարկ է նշել, որ չնայած նրան, որ Արթուր Սարգսյանը դիմումում նշել է՝ «Դրանից հետո փաստաբանը սկսեց ինձ խաբել, որ վերաքննիչ բողոք է ներկայացնելու դատարան՝ (...) դարձյալ բաց թողնելով վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետը», 2024 թվականի հունվարի 31-ին տեղի ունեցած Հանձնաժողովի նիստի ժամանակ Արթուր Սարգսյանը, Հանձնաժողովի անդամի այն հարցին, թե «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» ՀՀ վարչական դատարանի 30.08.2023 թվականի որոշման դեմ վերաքննիչ բողոքը Արթուր Սարգսյանի, թե փաստաբանի կողմից է ներկայացվել, Արթուր Սարգսյանը պատասխանեց, որ բողոքը իր անունից է, սակայն կազմվել և ներկայացվել է Փաստաբանի կողմից: Վերաքննիչ վարչական դատարանը 2023 թվականի հոկտեմբերի 17-ին նշված բողոքը ընդունել է վարույթ, այսինքն այս մասով Փաստաբանի կողմից ժամկետի բացթողում չի եղել, սակայն ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը նշված բողոքը մերժել է: Այսպիսով՝ չնայած նրան, որ Փաստաբանը Դիմողի հետ կնքած Պայմանագրի համաձայն՝ ՀՀ պարեկային ծառայության կողմից կազմված թիվ 8180299451 վարչական իրավախախտման մասին որոշումը անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցադիմում է կազմել, սակայն այն ժամանակին չի ներկայացրել ՀՀ վարչական դատարան և թեպետ գործողություններ է իրականացրել վստահորդի շահերը պաշտպանելու ուղղությամբ՝ Դիմողի անունից ՀՀ վերաքննիչ վարչական դատարան բողոք ներկայացնելով, սակայն ՀՀ վերաքննիչ դատարանը՝ «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» ՀՀ վարչական դատարանի 30.08.2023 թվականի որոշումը անփոփոխ թողնելով, մերժել է վերաքննիչ բողոքը: Վճռաբեկության կարգով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի նշված որոշումը չի բողոքարկվել:

Վերոգրյալ նորմերի և փաստերի համադրումից ու վերլուծությունից պարզ է դառնում, որ Փաստաբան Խանում Մկրտչյանը, ստանձնելով Արթուր Սարգսյանի իրավունքների պաշտպանությունը վարչական գործի շրջանակներում, բաց է թողել վիճարկման հայց ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետները: Փաստաբանն իր մասնագիտական պարտականությունների կատարման շրջանակներում պարտավոր էր ՀՀ վարչական դատարան հայց ներկայացնելիս տիրապետել

վարչական դատավարության իրավունքի ճյուղին, իր վստահորդին բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց տալ, ժամանակին կատարել հանձնարարության պատշաճ կատարմանն ուղղված բոլոր անհրաժեշտ գործողությունները, որը չի կատարել:

Տվյալ պարագայում, փաստաբանի դրսևորած վարքագիծը առերևույթ պարունակում է Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման հատկանիշներ:

Կարգապահական տույժի ընտրությունը.

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

*2) **խիստ նկատողություն.***

*3) **լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.***

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը՝ Փաստաբանի գործողության և/կամ անգործության՝ դատավարական ժամկետների բաց թողնման հետևանքով քաղաքացուն իրավունքների պաշտպանության հնարավորությունից զրկելու փաստը, ինչպես նաև փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները նրա նկատմամբ կիրառում է «խիստ նկատողություն» կարգապահական տույժը, ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացների պարտադիր մասնակցություն՝ «Վարչական դատավարության առանձնահատկությունները» թեմայով 4 (չորս) ակադեմիական ժամ ժամաքանակով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 11.1-րդ հոդվածի 3–րդ մասի 1–ին կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.10.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի և 39.7-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Խանում Սերյոժայի Մկրտչյանի (արտոնագիր՝ թիվ 278) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն, ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացների պարտադիր մասնակցություն՝ «Վարչական դատավարության առանձնահատկությունները» թեմայով 4 (չորս) ակադեմիական ժամ ժամաքանակով՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-23038-2-Ա
31 հունվարի 2024թ.
ք.Երևան